2004

891-Ակ

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱ-ՊԵՏՈՒԹԵԱՆ

'Ի լոյս ածեալ վերստին 'ի Գրիգոր Քա-
հանայէ Սուքիասեանց։



'Ի ՄՈՍԿՈՒ.

1838.

3262

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

'Ի լոյս ածեալ վերստին 'ի Գրիգոր Քահանայէ Սուքիասեանց։



'Ի ՄՈՍԿՈՎ։

'Ի տպարանի Հայկական ճեմարանին Լազարեանց Էշխանապետաց։

1838.

ՀՐԱՄԱՅԵՑԱՔ ՏՊԱԳՐԵԼ։

Դատաքննիչ գրոց՝ Միքայէլ արքեպիսկոպոս Սալլանթեանց, Միաբան և Նուիրակ սրբոյ Էջմիածնի։
1838 Ապրիլ 5։

ՀԽՍՀ-ССР
им. А. Мясникяна

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Յաւարտ տառից՝ հեգման վան — կից,
ւարտաբերման՝ ութ ազգ բա — ռից.
պարտ է սկիզբն՝ առնել բա — նից,
հարկաւորաց՝ քրիստոնէ — ից։
Երեք մասունք՝ են հաւա — տոյ,
լուսն Հոգւոյն՝ ազդեալ գը — րոյ.
զոր հարկ է մեզ՝ ջանիւ սեր — տել,
և զխորհուրդն՝ քաջ ճանա — չել։
Առաջին մասն՝ է այս յայտ — նի,
ուղղափառացս՝ յար պաշտե — լի.
երեք անձինք՝ և մի բնու — թիւն,
աստուածութեամբն՝ ան յոգնա — կի։
Երկրորդն է՝ մարդեղու — թեան,
առնուլ մարմին՝ մեր բընու — թեան.։
զոր միացոյց՝ անճառա — պէս,
բանն աստուած՝ յիւր էու — թեան։
‘Նաև երրորդն՝ եկեղեց — ւոյն,
և եօթնաթիւ՝ սուրբ խորհր — դոյն.
զորս ուրոյն՝ 'ի միտ առ — նուլ,
ըստ րաբունեաց՝ մեզ մեկնե — լոյն
Թէ այստեղիկ՝ տեղեկա — ցիս,

Լուսով գըրոց փառեալ էի ցիս·
և ըստ չափու՝ լուսոյ մը տացդ,
՚ի տան տեառըն՝ միշտ փայլես ցիս։
Որ ՚ի հնոցն՝ էր արա րեալ,
յերկար գըրտաք՝ զայն շարադ րեալ·
զայս կարճառօտ՝ հաւաքե ցաք,
դիւրին լիցի՝ ՚ի միտ ա ռեալ։



Մանուկ մըտավարժ՝ և սիրող՝ ուս ման.
մի ը վայր լըքցես՝ զեղանակ գար նան։
Զի բողբոջք ծառոց՝ և համայն սեր ման
անտուստ սկսեալ՝ ՚ի կատար փու թան։

# ԿՐԹՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

'Ի ձև հարցման և պատասխանւոյ։

## Մասն Առաջին։

Դու քրիստոնեա՞յ ես։

Այո՛ քրիստոնեայ եմ շնորհօքն քսի՛։

Զի՞նչ է նշանն քրիստոնէից։

Սուրբ և պատուական խաչն քրիստոսի։

Խաչակնքեա՛ զի տեսից թէ ո՞րպէս խաչակնքես։

✠ Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Ո՞վ ստեղծ ըզ քեզ։

Աստուած ամենակարօղն։

Վասն է՞ր ստեղծ։

Վասն այնորիկ՝ զի զնա ճանաչիցեմ. և զկամսն կատարիցեմ. և վերջապէս արքայութեն արժանաւորիցիմ։

Զի՞նչ է աստուած։

Է՛ ստեղծօղ երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութից։

Աստուած քանի՞ է։

Մի է։

Աստուածային անձինք քանիք են։

Երեք են։

Երից անձանց անուանքն զի՞նչ են։

Միոյն անունն հայր է, երկրորդին՝ որդի է, և երրորդին՝ հոգի սուրբ։

Ապաքէն հայր աստուա՛ծ է։
Ա՛յն աստուած է։
Որդին աստուա՛ծ է։
Ա՛յն աստուած է։
Հոգին սուրբ աստուա՛ծ է։
Ա՛յն աստուած է։
Ապա ուրեմն երեք աստուածք են։
Ո՛չ երեք ա՟ծք են. այլ՝ մի ա՟ծ և երեք անձինք։

## Մասն երկրորդ։

Յայսց երից անձանց ո՞ր անձն մարդացաւ։
Միայն որդին անձն մարդացաւ։
Մարդացաւ ասելն զի՞նչ ասել է։
Մեզ նման կատարեալ մարդ եղև ասել է մարմին առնլովն 'ի մաքուր յարենէ կուսին մարիամու։
Մարմին առօղն ո՞վ է։
Բանն աստուած, որ է միածին որդին։
Յորո՞ւմ աւուր էառ զմարմինն։
Յեօթն ապրիլի ամսոյն. որ է օր աւետման։
Զի՞նչ է առեցեալն։
Հոգի՝ միտք և մարմին. որք են մարդկայինք։
Առօղն և առեցե՟լն, ա՟ծ բանն և մարդկու՟թին զիա՞րդ լինին մի անձն և մի բնութիւն։
Քանզի բանն ա՟ծ այնպէս միաւորեաց ը՟ անձին և ը՟ բնութե՟ իւրում զմարդկու՟թին, որպէս մարմին մեր միաւորեալ է ը՟ հոգւոյ մերում. և մի բնութ՟ի եղեալ է ը՟ նմա առանց շփոթման։ Այնպէս և

մարդկութի՟ն միաւորեցաւ ը՟ անձին և ը՟ բնութանն ա՟յ. և մի ա՟ծամարդկային բնութի՟ եղև ը՟ նմա, առանց շփոթման՝ և առանց փոփոխման. որպէս վկայեն սուրբ հարքն Աթանաս, Կիւրեղ և՟ն։

Յիսուս ասելն զի՞նչ ասել է։

Փրկիչ ասել է. զի փրկեաց զմեզ ՚ի ձեռաց սատանայի, և ՚ի տանջ՟նց դժոխոց։

Քրիստոս ասելն զի՞նչ ասել է։

Օծեալ ասել է. վասն զի բանն ա՟ծ մարդցել օծաւ ՚ի հօրէն ա՟յ հոգւովն ս՟բ՟լ. որպէս Պետրոս առաքեալն ուսուցանէ. Գործ. 10։

Տէրն մեր յիսուս քրիստոս յո՞րում աւուր ծնաւ։

՚Ի վեցում աւուրն յունվարի ամսոյն։

Ո՞ւր ծնաւ։

՚Ի բեթղեհեմ հրէաստանի, ՚ի մսուրն անբանից։

Յումմէ՞ ծնաւ։

՚Ի կուսէն մարիամայ, որպէս ՚ի վերն ասացաւ։

Մարիամ ա՟ծածինն կոյս մնա՞ց յետ ծնանելոյն։

Այո՛. վասն զի անսերմն յղացաւ, և անապականաբար ծնաւ. վասնորոյ յետ ծնանելոյն կոյս մնաց։

Քրիստոս ըստ ա՟ծութե՟ն՝ ծնեա՞լ էր ՚ի հօրէ։

Այո՛ ծնե՟լ էր։

Ըստ մարդկութե՟ն՝ ծնա՞ւ ՚ի մօրէ։

Այո՛ ծնաւ։

Առաջին ծնունդն ո՞րպէս էր։

Անժամանակ և անմարմին՝ ծնունդ առանց մօր։

Երկրորդ ծնունդն ո՞րպէս էր։

Ժամանակեայ և մարմնով, ծնունդ առանց հօր։

Քանի՞ ամաց էր Քրիստոս յորժամ եկն 'ի մկրտութիւն։

Երեսնամեայ էր՝ ըստ վկայութեան Ղուկասու աւետարանչին։

Յորո՞ւմ ամսեան մկրտեցաւ։

'Ի վեցն յունվարի ամսոյն. յորում աւուր ծնեալ էր 'ի կուսէն՝ ծնաւ մկրտութբ և 'ի Յորդանանէ յօրինակ մեզ. և զի երկոքին ծնունդ են, թէպէտ և զնզնել են 'ի միմեանց խորհրդեամբ և ժամանակաւ. որպէս վկայեն բզմ սուրբ հարք, մանաւանդ սբն Ներսէս շնորհալի հայրապետն մեր։

Յումմէ՞ մկրտեցաւ Քրիստոս։

'Ի Յովհաննէ որդւոյն Զաքարիայի և Եղիսաբեթի։

Ո՞ւր մկրտեցաւ։

'Ի գետն յորդանան։

Զի՞նչ սքանչելիք եղեն անդ։

Հայրն ամենակալ ձայնիւն, և հոգին սուրբ իջմամբն յայտնեցին զքսի ածութին. վասնորոյ օր ծննդեան և մկրտութեն կոչի և օր յայտնութեան։

Քրիստոս 'ի քանի՞ ամս շրջագայեցաւ 'ի վերայ երկրի։

Յերեսն և երեք տարի և կէս։

Յայնքան ժամանակս զի՞նչ արար։

Ուսոյց հետևողաց իւրոց զճանապարհն ճշմարտուե։

Յետ այնքն ժամանակի կտրմանն զի՞նչ արար։

Եկն կամաւ 'ի չարչարանս, խաչեցաւ, և մեռաւ վասն մեր՝ ըստ առաքելոյն թէ քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց և այլն։

Ո՞ւր խաչեցաւ և մեռաւ։

'Ի լերինն գողգոթայ՝ մերձ 'ի քղքն եղէմ։

Վասն է՞ր մեռաւ։
Վասն փրկութեան մերոյ։
Յորո՞յ վերայ մեռաւ։
'Ի վերայ խաչափայտին։
Եթէ քրիստոս Աստուած էր՝ զիա՞րդ մեռաւ։
Ո՛չ ասեմ թէ աստուածային բնութիւն մեռաւ, այլ՝ առեալ մարմնովն, որ անճառելի միաւորութիւն, վասն որոյ և ասի Աստուած խաչեցաւ և մեռաւ։
Զկնի մահուանն զի՞նչ արարին զմարմինն քրիստոսի
Իջուցեալ 'ի խաչէն՝ եդին 'ի նորափոր գերեզմանի, անբաժանելի աստուածութեամբն։
'Ի քանի՞ աւուրս մնաց 'ի գերեզմանի։
Յերիս աւուրս։
Ուրո՞վ էջ 'ի դժոխս։
Բանական հոգւովն։
Յորժամ էջ 'ի դժոխս զի՞նչ արար։
Աւերեաց զդժոխս, և ազատեաց զհոգիսն՝ որք էին 'ի բանտին։
Յորու՞մ աւուր յարեաւ քրիստոս։
Յերրորդ աւուր յետ մահուանն։
Զի՞նչ արար նա յետ Յարութեանն։
Երևեցաւ կանանցն իւղաբերից և ապա աշակերտաց իւրոց և սրբոց առաքելոց։
'Ի քանի՞ աւուրս մնաց յաշխարհի յետ յարութեանն։
'Ի քառասուն աւուրս։
Եւ յետոյ զի՞նչ։
Համբարձաւ փառօք յերկինս 'ի լեռնէն ձիթենեաց յանդիման աշակերտաց իւրոց խոստացեալ միւսանգամ գալ 'ի դատել զաշխարհս։

Եւ ստուգեաց զխոստումն իւր։
Առաքելով զհոգին սբ̃ կենդանարար զաւետիքն Հօր ՚ի պենտէկոստէի յաւուր յիսներրորդի, ՚ի լրութիւն սինէական պատկամաց որ տուաւ իսրայէլի։

## Մասն երկրորդ։

Զի՞նչ է սուրբ եկեղեցին։
Եկեղեցին է ժողովումն ամ̃ հաւատացեալ քրիստոնէից. որք մկրտեալ են յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։
Զի՞նչ է խորհուրդ եկեղեցւոյ։
Է ազատութիւն հոգևոր։
Քանի՞ են։
Եօթն են։
Զի՞նչ են։
Մկրտութի. Դրոշմ. Հաղորդութի. Ապաշխարութի. Պսակ. Ձեռնադրութի. և Վերջին օծումն։
Մկրտութիւնն զի՞նչ է։
Է լուացումն արտաքին մարմնոյ, և մաքրումն ներքին հոգւոյ. և ազատութի յսկզբնական մեղաց։
Դրոշմն զի՞նչ է։
Է հաստատութե խորհուրդ ՚ի հաւատո ք̃սի, և կնիք ճանաչման. որ տուեալ լինի առ ՚ի զօրացուցանել և քաջացուցանել զմարդն. և առնել զինուոր քրիստոսի։
Հաղորդութիւնն զի՞նչ է։

Է մարմին և արիւն տն̃ մերոյ Յսի Քսի, և կերակուր հոգևոր. որ և վերջապէս տայ մեզ ժառանգել զկեանս յաւիտենականս։

Ապաշխարութիւնն զի՞նչ է։

Է զանցել չարիսն լալ, և զլալի իրս մի̃ ևս գործել. կամ դարձումն 'ի մեղաց, և գտանել վերստին զկորուսեալ շնորհսն։

Քահանայութի̃ն զի՞նչ է։

Է հոգևոր իշխանութի̃ իմն. որով կարող է մատուցանել զպատարագ նաև զայլ խորհուրդս կատարել։

Պսակն զի՞նչ է։

Է խորհուրդ եկեղեցւոյ, որ 'ի բաց բառնայ զշնութիւնն և զպոռնկութի̃ն. և անլուծանելի կապանօք կապէ զայրն և զկինն ընդ իրեարս, վասն փրկութե̃ իւրեանց. ծնանիլ և սնուցանել զորդիս 'ի պաշտօն ա̃յ։

Զի՞նչ է վերջին օծումն։

Է խորհուրդ եկեղեցւոյ որ կացուցեալ է առ 'ի սրբել զներելի մեղս։

Եկեղեցին մեր ունի՞ զխորհուրդս զայս։

Այո՛ ունի բայց 'ի մկրտութե̃ ընդ դրոշմին տայ ա̃մ մկրտելոյ։

Վասն է՞ր այսպէս։

Վասն զի կացուցեալ է խորհուրդս այս 'ի սրբել զներելի մեղս, ո̃պ խոստովանութի̃ն՝ զմահացուն։ Իսկ՝ ոմանք այսու յուսով զխոստովանութի̃ն բառնային, ո̃պ այլազգք ոմանք բարձե̃լ են։ Ուստի՝ հարկ եղև սր̃ց հարցն մերոց կցել զսա ը̃ դրոշմին. զի մի̃ այսու յուսով բարձեալ լիցի խոստովանութիւնն։

Գո՞յ այլ պատճառ կցելոյ ը̃ դրոշմին զայս խորհուրդ:

Այո՛ 'ի բարձման թագաւորութե̃ հայոց ժողովուրդք մեր տարագրեալ եղեն յաշխարհէ մերմէ ը̃ տիեզերս. և բզմք 'ի մէջ գերութե̃, 'ի ձեռս անհաւատից մեռանէին՝ առանց քահանայի: Ուստի սահմանեցին սբ̃ հարքն մեր 'ի մկրտութե̃ ը̃ դրոշմին տալ զօծումն զայս, զի մի՛ զրկեսցին 'ի սմանէ. այլ իբրև զդեղ նախապահպանողական ամենեքեան ունիցին առ ինքեանս:

Ապա՛ քահանայից վերջին օծումն զի՞նչ է:

Կատիւ է քահանայութեան կարգին:

Յումմէ՞ ընկալաւ եկեղեցին մեր զայս:

'Ի սբ̃յն Դիոնէսիոսէ արիսպագացւոյն. որ 'ի գիրս Յղգս եկեղեցական քահանայապետութե̃ 'ի գլ. է. 'ի մասն բ. ասէ՝ թէ առաքելական աւանդութի էր՝ զսբ̃զն ննջեցելոյն օծանել:

Առաքինութիւնն զի՞նչ է:

Է ունակութիւն մտաց՝ զոր ընդունի հոգին և լինի բարեգործ: Նա բաժանի յեօթն տեսակս:

Զի՞նչ են անուանք տեսակացն առաքինութեան:

Հաւատ. Յոյս. Սէր. Արիութի. Արդարութի. Խոհեմութիւն և Ողջախոհութիւն:

Հաւատն զի՞նչ է:

Կարգև մի հեղեալ 'ի մեզ յա̃յ. որով ճանաչեմք զա̃ծ արարիչ արարածոց, և թագաւոր ամենազօր:

Յոյսն զի՞նչ է:

Աներկբայ ակնկալութի հանդերձեալ բարեացն՝ զոր տալոց է ա̃ծ առաքինեաց՝ յաւուրն հատուցման:

Սէրն զի՞նչ է։

Է՝ ունակութիւն մտաց. որով սիրեմք զԱծ՝ վասն բարերարութեան. և զընկերս մեր հաւասար մեզ՝ վասն աստուծոյ։

Արիութիւնն զի՞նչ է։

Է՝ տոկալն ընդդէմ փորձութեանց աշխարհի. և տանել կամ համբերելն դժուարին կրից։

Արդարութիւնն զի՞նչ է։

Է՝ հաւասարաբաշխութի ը մէջ հոգւոյ և մարմնոյ. և զինչսն այլոց ոչ ինչ խլիք իւրացուցանել։

Խոհեմութիւնն զի՞նչ է։

Է՝ ընտրելն ը մէջ բարւոյ և չարի. Նաև չխաբել զոք. և չխաբիլ յումեքէ։

Ողջախոհութիւնն զի՞նչ է։

Է՝ ի բաց մերժելն յինքենէ զամ մարմնական հեշտութիւնս՝ որք պատահին։

Քանի՞ են պարգևք հոգւոյն սրբոյ։

Եօթն են. այս՝ Իմաստութի. Հանճար. Խորհուրդ։ Զօրութի. Գիտութի. Աստուածպաշտութի և Երկիւղ աստուծոյ։

Քանի՞ են գործք մարմնաւոր ողորմութեան՝ որք ի յիշատակ գան յաւուրն դատաստանի։

Եօթն են. այս՝ Կերակրել զքաղցեալս. Արբուցանել զծարաւիս. Զգեցուցանել զմերկս. Ժողովել զօտարս. Տեսանել զհիւանդս. Այց առնել բանտարկելոց. և Թաղել զմեռեալս։

Հոգևոր ողորմութիւնք ևս գոն։

Այո կան. և են է. այս՝ Խրատել զերկմիտսն. Առաջնորդել տգիտաց։ Աշտամբել զմեղաւորս.

Մխիթարել զտրտմեալս, Թողուլ զպարտս, Յանձրն առնուլ զվիշտս, և Աղաչել զած վասն կենդանեաց և մեռելոց՝ և վասն մեղաց։

Քանի՞ են օրինացն բանք. և ՚ի ձեռն որո՞յ ետ ած։

Տասն են բանք օրինացն այ. և ՚ի ձեռն Մովսէսի ետ ՚ի Սինայ լերին։

Ասա միըստ միոջէ՝ զի լուայց։

Նախ՝ Ես եմ տէր ած քո. և մի՛ եղիցի քեզ այլ ած բաց յինէն. և մի՛ դիցես զանուանն այ քո ՚ի վերայ սնոտեաց. Երկրորդ՝ Մի՛ արասցես քեզ կուռս ըստ ամի նմանութե. յերկինս ՚ի վեր. և յերկիր ՚ի խոնարհ. Երրորդ՝ Յիշեա՛ զի սրբեսցես զօր շաբաթուն. որ մեզ կիրակի. Չորրորդ՝ Պատուեա՛ զհայր քո և զմայր քո. Հինգերորդ՝ Մի՛ սպանաներ. Վեցերորդ՝ Մի՛ շնար. Եօթներորդ՝ Մի՛ գողանար. Ութերորդ՝ Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ. Իններորդ՝ Մի՛ երդնուցուս սուտ յանուն տն այ քո. Տասներորդ՝ Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո՝ և մի՛ տան նր, և մի՛ ընչից նր, և մի՛ ամ իրաց՝ որք նր իցեն։

Քանի՞ են ազգ մեղաց։

Երկու. այ՝ Սկզբնական և Ներգործական։

Զի՞նչ է սկզբնականն և զի՞նչ ներգործականն։

Սկզբնականն ՚ի հօրէն մերմէ յադամայ սերեալ ունիմք ամքն. որ և ջնջի մկրտութբ. Իսկ՝ յետ մկրտութե արարեալ մեղք ասին ներգործական։

Ներգործականն ՚ի քանի՞ս բաժանի։

Յերկս. այ՝ ՚ի Մահացու, ՚ի Ներելի և ՚ի Փոշետեսակ։

Զի՞նչ են մահացու մեղք։
Են այնք՝ որք զհոգիս գործողացն մահացուցանեն։
Ներելի և փոշետեսակն զի՞նչ են։
Այնոքիկ են՝ զորս թէ ոք գործեալ մոռասցի, կամ թեթևապէս կրեսցէ զապաշխարանս, կամ լիապէս ոչ կատարեսցէ, ներէ ած. վասն զի ներելի և փոշետեսակ ասին թեթևագոյն մեղք, ծայ և անուանքն պարզապէս յայտնեն։
Մահացու մեղք քանի՞ են։
Եօթն են. պ՝ Հպարտութի. Նախանձ. Բարկութի. Ծուլութի. Ագահութի. Որկրամոլութի և Բղջախոհութի։
Գո՞նէ մոլութեցս այսոցիկ ընդիմամաքժնէլ առաքինութիք։
Այո կան. և են եօթանեքին սոքա. պ՝ Խոնարհութի՝ ընդէմ Հպարտութե. Բարեհաճութի՝ ընդէմ Նախանձու. Հեզութի՝ ընդէմ Բարկութե. Առատասրտութի՝ ընդդէմ Ագահութե. Արիութի՝ ընդէմ Ծուլութե. Պահեցողութի՝ ընդդէմ Որկրամոլութե. Ողջախոհութի՝ ընդդէմ Բղջախոհութե։
Սարսափելի կամ յայ վրէժխնդիր մեղք ո՞յքեն։
Չորքս այսոքիկ՝ Անմեղ սպանումն. Արուագիտութի. Զրկանք աղքատաց, և հատանել զվարձս մշակաց։
Քանի՞ կերպիւ մեղանչէ ոք։
Երեք. պ՝ խորհրդով. բանիւ և գործով։
Մեկնեա մի ըստ միոջէ՝ զի իմացայց։
Խորհրդով մեղանչել ասի՝ յորժամ ՚ի սրտի մերում զչարիս խորհիմք. հաւանիմք և ախորժիմք. Բանիւն այն է, մինչ ստաքնութիս՝ բամբասանս անէծս՝ և այլպէս հայհոյանս խօսիմք. Իսկ գործովն է՝ մինչ ձեռօք կամ ոտիւք կատարեմք զն։

Քանի՞ք են ահացուցիչք մարդկան. և խորշեցուցիչք 'ի մեղաց։

Չորք են. դ՟՝ Մահ անողորմ. Դատաստան ահեղ: Դժոխք սարսափելի. և Արքայութիւն անճառ։

Միայն ուղղափառ դաւանութիւ՟, և զհաւատոյ մասունս՝ և զայլ հանգամանս քաջ ճանաչելով փրկութե՟ն կարե՞մք հասանել։

Ո՛չ առանց գործոց հաւատք՝ և ո՛չ առանց հաւատոյ գործք փրկեն. վասն զի ըստ առաքելոյն մինն առանց միւսոյն միշտ մեռեալ ասի։

Ո՞յք են բարի գործք՝ և քանի՞ք։

Եօթն զոյգ առաքինուե՟ց, եօթն զոյգ ողորմուե՟ց ը՟ որս են աղօթք և պահք։

Զքրիստոսի տ՟ն մերոյ մեզ աւանդել տ՟րունական աղօթսն ասա՝ զի լուիցուք։

Հայր մեր՝ որ յերկինս ես, սբ՟ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութի՟ քո. եղիցին կամք քո որպէս յերկինս՝ և յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թո՛ղ մեզ զպարտիս մեր. ո՟պ և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութի՟. այլ՝ փրկեա 'ի չարէ: Զի քո է արքայութի՟ և զօրութի՟ և փառք յաւիտեանս ամէն։

Ասա՛ 'ի դէմս սրբուհւոյ տ՟ծածնին սահմ՟նել աղօթսն։

Անկանիմք առաջի քո տիրամայր սբ՟ տ՟ծածին. և աղաչեմք զանարատ զկոյսդ: Բարեխօսեա՛ վասն անձանց մերոց. և աղաչեա՛ զմիածին որդիդ: Փրկել զմեզ 'ի փորձութե՟. և յամենայն վտանգից մերոց։

Ի՛նչ որպէս հաղորդեսցի շողօքս Աստուծոյ ծնրադրութեան:

Որ արձակիչդ ես կապելոց պարգեւատու ամենեցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա՛ եւ զիս ըղ-բաղձամեղս 'ի կապանաց մահու 'ի կեանս յաւիտենից. Ամէն։

Յորժամ քահանայն ասէ՝ զառէք կերայք՝ դու զի՞նչ ասել պարտիս։

Զաղօթս զայս. Օրհնե՛լ է պարգեւատուն կենաց, եւ պարգեւն անմահութե՛ ք͞ս ա͞ծ մեր։

Յորժամ ասէ զորբէք 'ի սմանէ, զի՞նչ ասել պարտիս։

Օրհնեալ է շնորհն ձրի, եւ պարգեւն անծախելի՝ կենդանի եւ կենդանարար մարմին եւ արիւն .ք͞սի ա͞յ մերոյ։

Յորժամ 'ի սրբութ͞ի ս͞ե͞ղն ասասցէ, զի՞նչ պարտիս ասել։

Զաղօթս Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանին. Զերեւալդ ինձ 'ի փրկութ͞ի խոստովանիմ ճշմարտապէս մարմին եւ արիւն .ք͞սի ա͞յ յուսոյ իմոյ. եւ աղաղակեմ առ քեզ՝ մեղա՛յ յերկինս եւ առաջի քո։ Սրբեա՛ զիս յա͞մ աղծութենէ հոգւոյ եւ մարմնոյ. շնորհեա՛ ինձ ժամանակ՝ եւ ցանկութ͞ի ապաշխարութ͞ե. փրկեա՛ զիս յերեւելի եւ յաներեւոյթ թըշնամեաց. պահպանեա՛ զօգուտն հոգւոյս եւ մարմնոյս։

Պարգեւեա՛ ինձ ք͞րդրծութ͞ եւ բարեպաշտութ͞ զքեզ արժանապէս ճաշակել, եւ փառաւորել զհայր եւ զորդի եւ զս͞բ հոգին այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ՀՍԽՀ-ССР

՚Ի Հոգելոյս Թադէոսի Հրաշաքեան Պարտաղերէ Մարուքեան Կոստանդնուպօլսեցւոյ շարագրեալ համառօտ երագ նուագարծ մանկանց Դպրոցաց, ՚ի լինել յերաժշտե-ծու առաքինական կրթութեան, առ գեղեցիկ քաղաքավարութեան, և հոգւոյ առ անմեղ կենաց փառօք ՚ի ճանաչենական կատարելութեան ամենայնիւք Երրորդութեանն՝ Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն։

Տէրունական՝ ազդու բա  նի,
 լեր ունկնդիր՝ ով պատա  նի.
 որով յեթերս՝ օթարա  նի,
 ուղիղ առհ քեզ՝ բացեալ լի  նի։
Խոնարհ լեր դու՝ հոգւով յաստ  ուած,
 որոյ ձեռաց՝ ես ստեղծ  ուած.
 զի մինչ էիր՝ տարևաս  փած,
 գթով դարձեալ՝ յեղեմն է  ած։

Ամենայն որք զորդիական երկիւղն պահել ունին առ Ած՝ զհրամանս նորա կատարելով, և հեռանալով ՚ի մտածմանէ՝ ՚ի յօժարութէ, և յառնելոյ զայն՝ որ ընդդէմ է հրամանի նորին։ Եւ զայս հոգևորական երկիւղ հարկ է յայտնել ըստ առաքելոյն արտաքին նշանօք և գործովք։ Նախ՝ յեկեղեցւոջ ընդ ամ քրիստոնեայ եղբարց՝ առաջի ամենատեսին Այ յայտ-

[library stamp]

նելով զհնազանդութի՟ և զխոնարհութի՟ յաղօթելն՝ ճշմարտապէս երևեալ աղքատ և կարօտ ողորմութե՟ն՝ բարութե՟ն և իմաստութե՟ն ա՟յ. ը՟ որոյ բերանալիր գոհութի՟ս մատուցանել նմա, զի յոչընչէ գոյացոյց զմեզ. մարդասիրա՟ր 'ի պատկեր բարութե՟ իւրոյ. և մինչ 'ի մեղս գլորեցաք. վերստին փրկեալ զմեզ 'ի կապանաց ստ՟նյի՝ արժանացոյց որդէգրութե՟ ձրի շնորհօք իւրովք՝ 'ի ձեռն որդւոյն միածնի: Վասնորոյ՝ հարկէ իւրաքանչիւրոց 'ի ք՟ս հաւատացելոց յանձնել զինքեանս և զմիմեանս նմա միայնում՝ որ գիտէ ըզպէտս մեր և զկարիս առաւել քան զոր խնդրեմք և իմանամք: Երկրորդ՝ 'ի մէջ վարժանին զճշմարիտ որդիական մտերմութի՟ դաստիարակի ցուցանելով. պատուեալ զնա որպէս զհայր. և խոնարհագէմ հարցմամբ խնդրեալ 'ի նմանէ լուծումն տարակուսանաց. և զհոգեշահ խրատ 'ի լուսաւորութե՟ ամենընդունակ մտաց. և հնազանդութե՟ պատրաստ լինել 'ի կատարումն ա՟մ անմեղսածին հրամանաց բ՟զմերախտ ուսուցչին իւրեանց: Ո՛վ որ 'ի մանկութէ՝ ո՛չ կորացուցէ զպարանոց իւր առ հրամանս դաստիարակի, 'ի պատանեկութե՟ իրում ո՛չ խոնարհի իշխանաց. 'ի յերիտասարդութե՟ն՝ ո՛չ կարէ ունիլ ըզմիաբանութի՟ ը՟ քաղաքացիս. ո՛չ 'ի ծերութե՟ն՝ զշնորհ կառավարութե՟. և ո՛չ զա՟յ հաճոյարար կատարելութի՟՝ 'ի յա՟մ կեանս իւր: Ի՟ ժամու ազատութե՟ 'ի գնալ աշակերտաց 'ի տուն՝ չէ՟ պարտ շրջագայիլ և ըզբօսնուլ 'ի շուկայս և 'ի փողոցս. այլ ուղղապէս և համեստ ընթացիւք դիմել առ ծնօղսն. որք յետ ծննդեան՝ բազմադիմի տառապակրութե՟ սնուցել և 'ի

հասակ ուսման և կրթութե՟ (ըստ ա՟ծն նախախնամութե՟) հասուցեալ, յանձնեալ են ապահովութե՟ դպրոցի· ուրանօր մոռացել զլուսնանման փոփոխամանութիս, ստանալոց են զարփիատիպ հաստատութի մոռաց և վարուց. է որ 'ի նշան մեծի շնորհակալութե՟ պարտին համբուրել զձեռս նոցա: Զորրորդ՝ 'ի ճաշուկամ յընթրեաց ժամս նախ քան զբազմիլ իւրեանց՝ հարկ է ասել զտէրունականն աղօթք, և սպասել բազմելոյ մեղաց. յետ որոց նստիլ 'ի պատշաճաւոր տեղիս. և միշտ համեստութ՟բ զսպել զինքեանս, զի մի՛ գուցէ անսնդաբար յառաջ քան զբազմականն ձգիցեն զձեռսն 'ի սեղանն, որով և ըստ արժանւոյն դատապարտեսցին. ըստորում գիտէին զկանոնս քաղաքավարութե՟, և ոչ պահեցին: Նոյնպէս պահպանել 'ի գինւոյ՝ յօղւոյ և յայլ արբեցուցիչ ըմպելեաց. որք են ըստ ա՟մի վնասակար, ոչ միայն նորոգ հերկագործեալ և զսերմն իմաստութե՟ ընկալեալ բանեղէն զօրութե՟ մտոյն՝ երևակայութե՟ն և յիշողականութե՟ իւրեանց, այլև խորշակահար ցամաքեցուցիչ, և առաւօտու որդն՝ դդմենանման առողջութե՟ ծաղկեալ հասակաց նց. որք են հովանի զըլխոյ յօնանատիպ ծնողաց իւրեանց: Իսկ է յառնելն 'ի սեղանոյ՝ կրկնել զտէրունական աղօթքն 'ի գոհութի. խոնարհութ՟բ և սիրով համբուրեալ ըզձեռս տածիչ և սնուցիչ ծնողացն: Վերջապէս՝ 'ի ժամու ննջման պարտին նախապէս դառնալ յարեւելս, և աղօթս մատուցանել ա՟յ. յանձնելով զինքեանս պահպանողութե՟ նր. զի ազատ եղիցին 'ի գիշերային արհաւրաց և 'ի պէսպէս փորձութե. յետ

որոյ պարկեշտութ մերկացեալ զհանդերձս, ընկող-մանիլ յանկողինս իւրեանց։ Եւ արդ պարտ է իւ-րաքանչիւր ուսումնականաց զկանոնս զայսոսիկ ու-սեալ 'ի դպրոցի՝ կենցաղավարիլ ըստ այսմ օրինակի. զի 'ի ժամանակս կատարելոյն իւրեանց իրաւամբք ասասցեն առ սկզբնաբուղխ աղբիւրն ած բարեաց՝ թէ 'ի քեզ անկայ ես յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ դու ես ած իմ։

Արդա՛ր է յոյժ՝ աստուածային դատաս    տան.
պահել զմեզ 'ի դիպահոջ՝ յանշուք    տան.
ուր տքնութ՝ կրթեալ իբր 'ի մարգա    րան.
յուսով հասցուք՝ յարքունական ապա    րան։

## ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՂՕԹՔ։

Աղաչեմք զքեզ տր ած մեր և գոհանամք զան-հաս մարդսիրութեդ քումմէ՝ որ արժանի արարեր զա-նարժան ծառայքս քո ժամանել 'ի ժամ գիշերոյս. դու ես տր տուունջեան և գոյացուցիչ գիշերոյ. դու պահպանեա զմեզ 'ի կարծեաց ցնորից յերկիւ-ղէ երևելեաց և աներևութից թշնամեաց, և ամ-րացո 'ի զառնուեց դիւաց 'ի բռնութէ բէլիարայ՝ 'ի սաստից ստնյի՝ 'ի ծանրութէ խալիլկաց՝ 'ի փլմա-նէ շինուածոց՝ 'ի նենգութէ մարդկանց. յաղանդոյ կանանց և կախարդաց՝ 'ի մոլար խորհրդոց՝ յաղ-տեղի մտածութեց 'ի ցանկական ցաւոց 'ի զարհու-րական քնոյ՝ 'ի զառնութէ երազոց յարհաւրաց չարին՝ յամբոխական անրջոց և այլ ամ իրաց՝

134
42



չարաց՝ պահպանեա՛ զծառայքս քո ամենակեցոյց շնորհիւդ և քո ամենահզօր ողորմութեամբդ՝ շրջապատեալ ամրացո՛ յամ կողմանց զեննեալ հանդըստարանիս մերոյ՝ յաջ և յահեակ՝ յարևելս և յարևմուտս ՚ի հիւսիս և ՚ի հարաւ՝ յերկինս ՚ի վեր և յերկիր ՚ի խոնարհ՝ զբանակս հրեշտակաց առաքեա՛ ՚ի բնակարան ծառայից քոց՝ և տուր մեզ արթնութիւն մտաց և զգաստութիւն զգայարանաց. զի զուարթ մտօք և արթուն խորհրդով հանդերձ և գոհութեամբ փառաւորեսցուք զամենազօր աստուածութիւնդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

## ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏԵԱՆ։

Գոհանամք զքէն տէր Աստուած մեր, որ զարթուցեր զմեզ ՚ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քոյ։ Զարթո զմիտս մեր արդարութեան առ քեզ տէր Աստուած մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութիւն քո, եկեսցէ և բնակեսցէ առ մեզ Աստուածութիւն քո, և ողորմութիւն քո հովանի և պահապան լիցի ՚ի վերայ պաշտօնէից քոց։ Եւ ըզմեզ զծառայս քո արժանի արա ՚ի տուէ և ՚ի գիշերի, և յամենայն ժամու միշտ խորհիլ ՚ի սէր պատուիրանաց քոց, և գոհանալով փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Гос. Публ. Библиотека ССР им. А. Мясникяна

